



**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ  
ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՔԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԻՑԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**



ՀՅ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ.  
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԻճԱԿԻ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծությունը պատրաստվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից՝ ԱՍԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ։ Փաստաթղթում բերված փաստերը, մեկնարանություններն ու եզրակացությունները վերագրվում են հեղինակներին, և դրանց համար ԱՍԿ-ի մանկական հիմնադրամը պատասխանատվություն չի կրում։

## **Բովանդակություն**

<b>Նախաբան</b> .....	<b>4</b>
1. Երեխաների իրավունքների հասկացությունը և դրանց պաշտպանության անհրաժեշտությունը .....	6
2. Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական և սոցիալական երաշխիքներն ու խոչընդոտները .....	7
3. Երեխաների իրավունքների պաշտպանության իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում .....	15
Մանկատներ և խնամքի այլ հաստատություններ .....	15
Խնամատար ընտանիքներ .....	19
Խնամակալության և հոգարածության մարմիններ .....	22
Կրթություն .....	25
4. Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնական խնդիրները և առաջարկվող լուծումները .....	29
5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դերը երեխաների իրավունքների պաշտպանության գործում .....	34

«Արդյոք կարելի է գտնել ավելի սուրբ պարպականուրյուն, քան յուրաքանչյուր երեխայի իրավունքների աշարժոց պաշտպանուրյունն այնպես, ինչպես ցանկացած այլ անձինք: Արդյոք կարելի է առաջնորդի համար գտնել ավելի դժվար փորձուրյուն, քան առանց քաշառուրյունների ապահովեան խնդիրի իրագործումը»:

**Քոֆի Անան**

## Նախաբան

Երեխաները պետության, հասարակության և ընտանիքի բարորության կայուն զարգացման կարևոր բաղադրիչ են հանդիսանում, որոնց պաշտպանուրյունը, իրավունքների և ազատուրյունների իրականացման համար անհրաժեշտ երաշխիքների սահմանումը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի կառավարության և միջազգային հասարակության կարևորագույն խնդիրներից մեկը: Երեխաների իրավունքները մարդու իրավունքների այն հատուկ տեսակն են, որոնք ձևավորել են մշակույթի զարգացմանը և հասարակության առաջընթացին գուգահեն: Հաշվի առնելով այս ոլորտի առանձնահատուկ նշանակությունը՝ Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանուրյունը դասվում է այն ակտուալ խնդիրների շարքին, որոնց առկայության պայմաններում իրավիճակը պարտավորեցնում է յուրաքանչյուրին կարգախոսներ ուղղելուց բացի սահմանել հատակ իրավական դեղատոմսեր, որոնք անհրաժեշտության դեպքում կօգնեն պաշտպանել երեխաների իրավունքներն ու օրինական շահերը:

Երեխաների իրավունքների պաշտպանուրյունը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որտեղ կարևոր է ոչ միայն ծնողների և ընտանիքի անդամների, այլև պետական ողջ համակարգի ներգրավումը:

Սույն վերլուծությունն ուղղված է երեխաների իրավունքների պաշտպանության անհրաժեշտության գնահատմանը, որտեղ կմերկայացվեն երեխաների իրավունքների պաշտպանության սոցիալական երաշխիքներն ու խոշընդուները, մանկատներում և խնամքի

այլ հաստատություններում կատարված իրավիճակային ուսումնասիրության արդյունքում վեր հանված մի շարք խնդիրներ, որոշակի խնդիր երեխաների կրթության իրավունքի ապահովման համար առկա խոչընդոտները, խնամատար ընտանիքների ինստիտուտի հասկացությունն ու կարևորությունը, կզնահատվեն խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքը և դրանում առկա թերացումները, ինչպես նաև առաջարկներ կներկայացվեն նշված խնդիրների լուծման համար: Անդրադարձ կկատարվի նաև երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ նարդու իրավունքների պաշտպանի առավելագույնս արդյունավետ գործելուն ուղղված անհրաժեշտ մեխանիզմների, կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների համար, համապատասխան ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ ուղղություններին և ռազմավարությանը:

## **1. Երեխաների իրավունքների հասկացությունը և դրանց պաշտպանության անհրաժեշտությունը**

Երեխաների իրավունքները այն իրավունքներն ու ազատություններն են, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր երեխա՝ անկախ ուսասայից, սեռից, լեզվից, կրոնից, ծննդյան վայրից, ազգային կամ սոցիալական պատկանելությունից, գույքային, կամ այլ դրությունից:

Երեխաների իրավունքների բնորոշումը բխում է Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագրից, որտեղ սահմանված է, որ մայրերն ու երեխաները իրավունք ունեն խնամակալության և օգնության: Հետևաբար, ճանաչելով երեխաների հավասար իրավունքները՝ միջազգային հանրությունը ճանաչում է նաև երեխաների համար անհրաժեշտ լրացուցիչ օգնության և աջակցության անհրաժեշտությունը:

Առաջին հայացքից կարելի է ասել, որ դրանք ընդհանրապես մարդու իրավունքների մեծ ոլորտի մի մասն են կազմում, և Վերջիններիս պաշտպանության հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները կարող են կիրառվել նաև երեխաների իրավունքների պաշտպանության համար: Սակայն պաշտպանության առանձնահատուկ մեխանիզմների մշակման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, եթե առաջ է քաշվում դրանց իրականացման պատասխանատվության խնդիրը: Մեծերի խնդիրն է երեխաներին օգնություն ցուցաբերել պատրաստվելու ինքնուրույն կյանքի, դառնալ հասարակության լիիրավ անդամ, պայմաններ ստեղծել նրանց ֆիզիկական և մտավոր զարգացման համար: Նաև անհերքելի կարևորություն ունի պետության դերը, որի հիմնական առաքելությունը դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների, արդյունավետ մեխանիզմների ստեղծումն է, հասարակության իրավագիտակցության ձևավորման և ուժեղացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հսկողության սահմանումը:

Մարդու իրավունքների հասկացության զարգացումը հանգեցրեց նրան, որ երեխաների իրավունքները դասվեցին առանձին խմբում: 20-րդ դարի սկզբին երեխաների իրավունքները դիտվում էին

միայն Երեխաների աշխատումի օգտագործման, նրանց առքուվաճառքի և անշափահասների մարմնավաճառության կոնտեքստում: Եվ առողջության պահպանության, իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը պատճառ հանդիսացան Ազգերի լիգայի կողմից 1924թ. Երեխաների իրավունքների ժնևյան հոչակագրի ընդունման համար:

Հաջորդ կարևոր քայլը եղավ Միացյալ Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) կողմից 1959թ. Երեխաների իրավունքների հոչակագրի ընդունումը, որտեղ սահմանվում էին Երեխաների պաշտպանության և բարօրության ապահովման համար կարևոր սոցիալական և իրավական մի շարք սկզբունքներ: Այնտեղ նշվում է, որ Երեխան, դեռևս չունենալով ֆիզիկական և մտավոր հասունություն, պաշտպանության և հոգատարության կարիք ունի՝ ներառյալ անհրաժեշտ իրավական պաշտպանությունը՝ ծնունդից առաջ և հետո: Փաստաթուղթը սահմանում էր 10 սկզբունքներ, որոնք ուղղված էին «Երեխաների համար երջանիկ մանկություն» ապահովելուն:

1970-ական թվականների վերջերին հասարակության զարգացման մակարդակը, Երեխաների հետ կապված մի շարք նոր խնդիրների առաջացումը ցույց տվեցին, որ դեկլարատիվ սկզբունքների սահմանումը բավարար չէին, և անհրաժեշտ էին փաստաթուղթեր, որոնք իրավական նորմերի հիման վրա կսահմանեին Երեխաների իրավունքների պաշտպանության հստակ միջոցներ: Այդ նպատակով 1974թ.-ին ընդունվեց **Արտակարգ իրավիճակներում և զինված հակամարտությունների ժամանակ կանանց և Երեխաների իրավունքների պաշտպանության մասին հոչակագիրը**, 1986թ.-ին ընդունվեց **Երեխաներին ազգային և միջազգային ոլորտներում դաստիարակման և որդեգրման հաճանելու ժամանակ նրանց պաշտպանության և բարեկեցության սոցիալական և իրավական սկզբունքների մասին հոչակագիրը**:

1989թ. արդեն իսկ ընդունվեց նոր փաստաթուղթ, որտեղ առավելագույնս հաշվի էին առնված հասարակության մեջ Երեխայի կյանքի բոլոր կողմերը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց **Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան**, որի համաձայն Երեխաների իրավունքների պաշտպանության ժամանակ

որպես առաջնային հիմնախնդիր է համարվում Երեխաների շահերի ճանաչումը, և առանձնացվում է հասարակության կողմից հատուկ խոցելի խմբերի՝ ծնողազորկ, հաշմանդամ, վախսատական և այլ Երեխաների մասին հոգավլ:

Երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է միջազգային և ներպետական օրենսդրության միջոցով: Առկա է միջազգային հիմնարար սկզբունքների համակարգ, որն իր մեջ ներառում է ինչպես ընդհանրապես մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ հատուկ՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին բնորոշ սկզբունքներ, որոնք ընկած են հիշյալ իրավական ակտերի հիմքում և ապահովում են դրանց միատեսակ կիրառությունը:

Հիմնարար սկզբունքներից է խտրականության բացառնան սկզբունքը, համաձայն որի, յուրաքանչյուր Երեխա հավասար պաշտպանության իրավունք ունի և չպետք է որևէ խտրական վերաբերմունք ցուցաբերել կախված նրանց մաշկի գույնից, ռասսայական, էթնիկ, սեռական, լեզվական, կրոնական կամ այլ պատկանելությունից:

Երեխայի շահերի առաջնահերթության սկզբունքի համաձայն, այն իրավիճակներում, երբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ այլ մասնավոր անձանց գործունեությունը որևէ կերպ առնչվում է Երեխաների շահերին, ապա առաջնային ուշադրություն պետք է դարձնել Երեխաների շահերին և դրանք համարել գերակա: Այս սկզբունքն իր կարևորության շնորհիվ ընկած է յուրաքանչյուր Երկրում Երեխաների իրավունքների պաշտպանության օրենսդրական, դատական և վարչական մեխանիզմների հիմքում:

Երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար կարևոր հիմք է հանդիսանում նաև Երեխայի արտահայտած կարծիքի նկատմամբ հարգանքը, որը հնարավորություն է տալիս դրանց պաշտպանությունն իրականացնել վերջիններիս շահերին համապատասխան: Այս առումով կարևոր է ոչ միայն Երեխաների նկատմամբ հարգանքի մթնոլորտ ձևավորել ընտանիքում, դպրոցում, խնամքի հաստատություններում, այլև հնարավորություն ընձեռել մասնակցել այն հարցերի քննարկմանը, որոնք ազդեցություն պետք է ունենան վերջիններիս վրա:

Երեխաների գոյատևման և առողջ զարգացման ապահովման սկզբունքի համաձայն պետությունը պետք է ոչ միայն ապահովի երեխայի կյանքի իրավունքը, այլև դրական քայլեր ձեռնարկի նրան աջակցելու, կյանքի տևողությունը երկարացնելու, ֆիզիկական և հոգևոր լիարժեք զարգացման համար: Այս սկզբունքի ապահովումը հիմք է հանդիսանում երեխայի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրականացման համար:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ երեխաների իրավունքների միջազգային պաշտպանության ինստիտուտը հանդիսանում է միջազգային սկզբունքների և նորմերի համակարգ, որոնք բնորոշում են երեխայի հիմնական իրավունքներն ու ազատությունները, պետության համար սահմանում են պարտականություններ դրանք ապահովելու և իրականացնելու համար, ինչպես նաև սահմանում են միջազգային վերահսկողության մի շարք մեխանիզմներ՝ պետությունների կողմից իրենց միջազգային պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Երեխաների իրավունքները ընդհանրապես մարդու իրավունքների ողջ համակարգում առանձին խմբում դասվում են հաշվի առնելով մի շարք հանգանանքներ՝ երեխայի խոցելիությունը, անպաշտպան լինելը, տարիքի հետ կապված մի շարք կարիքների առկայությունը, ինչպես նաև երեխայի զարգացման անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների դասակարգման ավանդական անալոգիան հաշվի առնելով՝ երեխաների իրավունքները 1989թ. կոնվենցիայի համաձայն դասակարգվում են 5 խմբում՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Նման դասակարգման առկայությունը պատահական չէ: Այն կարենոր և անհրաժեշտ պայման է հանդիսանում պետությունների՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում պարտականությունների սահմանման և դրանց ապահովման գործում պատասխանատու պետական մարմինների իրավասությանը վերապահված խնդիրների բաշխման համար, իսկ հիշյալ սկզբունքները հիմք են հանդիսանում այն չափանիշների սահմանման համար, որոնց համապատասխան գործելիս ակնկալվում է հասնել անհրաժեշտ արդյունքի:

## **2. Երեխաների իրավունքների պաշտպանության իրավական և սոցիալական երաշխիքներն ու խոչընդոտները**

Երեխաների իրավունքների իրավական և սոցիալական պաշտպանության երաշխիքներ ասելով պետք է հասկանալ սոցիալական և իրավական մեխանիզմների այնպիսի համակարգ, որն անհրաժեշտ է երեխայի իրավունքների իրականացման համար: Սոցիալական երաշխիքները կարելի է բնորոշել որպես պետության կողմից երաշխավորված տնտեսական, կազմակերպչական և իրավական այնպիսի միջոցների միասնություն, որն ուղղված է քաղաքացիներին աջակցելու հաղթահարել «կյանքի դժվար իրավիճակները»: Ընդ որում, սոցիալական մեխանիզմների համակարգն ավելի լայն ոլորտ է ընդգրկում, քանի որ իրավականը կարգավորում և փոխազդում է սոցիալական պաշտպանության ոլորտում առկա հարաբերությունների վրա: Յուրաքանչյուր պետության դերը նման մեխանիզմների և երաշխիքների ստեղծման և իրականացման գործում շատ կարևոր է, քանի որ հենց պետությունն է իր պետական և տեղական ինքնականավարման մարմինների միջոցով վերահսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ: Եվ կախված յուրաքանչյուր երկրի իրավական և կառավարման համակարգի գարգացման աստիճանից՝ այս ոլորտում առկա խնդիրներն էապես տարրերվում են, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր դեպքում սոցիալական և իրավական մեխանիզմներ սահմանելիս պետք է հաշվի առնվեն հասարակության առջև ծառացած խնդիրներն ըստ առաջնահերթության, երկրի կառավարման համակարգի առանձնահատկությունները, իրավագիտակցության մակարդակը և նման կարևոր մի շարք այլ հանգամանքներ:

Եվ չնայած երեխաների իրավունքների պաշտպանության նման երաշխիքների սահմանմանը, այսօր առկա են մի շարք սոցիալական և իրավական խոչընդոտներ, որոնք իրական արգելվ են հանդիսանում հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության և ապահովման համար: Նման խոչընդոտների վերացումը կենացական անհրաժեշտություն է հատկապես աղքատ և զարգացող երկրների համար, որտեղ երեխաները ամենախոցելի և առավել

անբարենպաստ վիճակում գտնվող խումբն են կազմում, և վերջիններիս իրավունքների պաշտպանությունը սովորաբար մղվում է ամենահետին մակարդակ:

Հետևաբար, երեխաների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ են բարենպաստ պայմաններ դրանք իրականացնելու համար, որոնք ապահովված կլինեն կայուն իրավական և սոցիալական երաշխիքներով:

Այսպես՝ կրթության իրավունքի իրականացումը կենացական կարևորություն ունի հասարակության սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման համար, սակայն այսօր ողջ աշխարհում այն անհասանելի է մնում միլիոնավոր երեխաների համար: Աշխարհում մոտ 72 միլիոն երեխաներ հնարավորություն չունեն նույնիսկ տարրական կրթություն ստանալ, իսկ ավելի քան 759 միլիոն չափահասներ գրագետ չեն և հնարավորություն չունեն իրենց և երեխաների կյանքը բարեկանալու: Տարբեր երկրներում կրթություն չստանալու պատճառները տարբեր են լինում, դա կարող է լինել հիվանդության, խտրականության դրսերման, դպրոցական պարագաներ ձեռք բերելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության, ծննդների կողմից երեխաներին աշխատեցնելու պատճառով և այլն, որոնք ինչպես երևում է ունեն սոցիալական և իրավական բնույթ:

Նույնը կարելի է ասել առողջության պահպանման իրավունքի մասին: Յուրաքանչյուր երեխա պատշաճ բժշկական ծառայությունների իրավունք ունի, որը նշանակում է, որ յուրաքանչյուր երկիր պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծի ցանկացած իրադրությունում երեխաների համար նման ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար: Եվ չնայած, որ առողջության իրավունքը երեխաների համար կենացական կարևորություն ունի, ողջ աշխարհում յուրաքանչյուր տարի 5 տարեկանից ցածր ավելի քան 13 միլիոն երեխա է մահանում այնպիսի հիվանդություններից, որոնք հնարավոր է բուժել, իսկ աղքատ երկրներում կանաց 40 տոկոսը ծննդաբերում է առանց որևէ բժշկական օգնության, որի արդյունքում փոխանցված կամ ձեռք բերված հիվանդություններից երեխաները մահանում են կյանքի առաջին իսկ ամիսներին: Երկրի բնակչության

1/3-ը բարձր գների պատճառով հնարավորություն չունի ձեռք բերել իրենց առողջության համար շատ կարևոր դեղամիջոցներ:

Նման վիճակագրական տվյալների պատճառ են հանդիսանում տարբեր հանգամանքներ՝ բազմաթիվ երկրներում բժշկական ծառայությունները երեխանների համար վճարովի են և մարդիկ ստիպված են լինում երկար գումար կուտակել դրանցից օգտվելու համար, որոշ երկրներում պատճառ է հանդիսանում խտրականության դրսերումը և ինֆորմացիայի պակասը, որի պատճառով սոցիալական անապահով խավի երեխանները նույնիսկ անվճար բժշկական ծառայությունների առկայության դեպքում հնարավորություն չեն ունենում պատշաճ կերպով իրականացնել իրենց ամենակարևոր իրավունքներից մեկը:

Վերոնշյալ օրինակներից ակնհայտ է, որ երեխանների իրավունքների պաշտպանության երաշխիքների սահմանման պայմաններում այնուամենայնիվ առկա են սոցիալական և իրավական մի շարք խոչընդոտներ, որոնք առաջանում են իրավակիրառ պրակտիկայի անկատար լինելու, հասարակության իրավագիտականության ցածր մակարդակի, տեղեկատվության անմատչելիության, պետական վերահսկողության մեխանիզմների ոչ պատշաճ կիրառման պատճառով:

Սոցիալական լուրջ խոչընդոտ է հանդիսանում սոցիալական անապահովությունը և աղքատությունը, որի դեպքում չկարողանալով նույնիսկ հոգալ տարրական բնական պահանջմունքները, երեխանները հնարավորություն չեն ունենում իրականացնել կարևոր իրավունքները: Այն իրենից ներկայացնում է ոչ միայն նյութական արժեքների, այլև դրանք օգտագործելու հնարավորության բացակայություն, որի արդյունքում վտանգի է ենթարկվում անձի գոյությունն՝ ընդհանրապես:

Սոցիալական լուրջ խոչընդոտ է համարվում նաև երեխանների աշխատանքը: Զրկված լինելով գոյության պահպանման սոցիալական պայմաններից հաճախ օտար անձանց կամ ծնողների կողմից վերջիններս տարբեր վտանգավոր և տարիքին անհամապատաս-

խան աշխատանքների են ներգրավվում (ստրկություն, թմրանյութերի առքուվածառք, մուրացիկություն և այլն):

Երեխաների իրավունքների իրականացման լուրջ խոչընդուակարելի է համարել նրանց նկատմամբ բռնությունը, որի դեպքում ֆիզիկական և հոգեկան ճնշումների միջոցով վտանգվում կամ խախտվում է երեխայի առողջությունը: Ընդ որում այն կարող է արտահայտվել դաժան և անմարդկային վերաբերմունքի տարբեր ձևերով՝ ծեծ, վիրավորանք, սեքսուալ բնույթի գործողություններ և այլն:

Խնչ վերաբերում է երեխաների իրավունքների պաշտպանության իրավական խոչընդուակարելին, ապա պետք է նշել, որ ինչպես սոցիալական և իրավական երաշխիքները, այնպես էլ խոչընդուակարերը սերտորեն փոխկապակցված են: Եթե սոցիալական խոչընդուակարեն այն պայմանները կամ հանգանաքներն են որոնք խոչընդուակում են հիշյալ իրավունքների իրականացմանը նույնիսկ դրանց իրավական կարգավորման պայմաններում, ապա իրավական խոչընդուակարեր ասելով պետք է հասկանալ այս ոլորտը կարգավորող իրավական համակարգի բացերը, անկտարությունը, որի պատճառով պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինները պատշաճ կերպով չեն իրականացնում իրենց վրա դրված պարտականությունները, անհրաժեշտ իրավական իհմքեր չեն ստեղծվում կոնկրետ իրավունքի պաշտպանության համար, չեն նախատեսվում դրանց խախտումների կանխարգելման և վերացման արդյունավետ մեխանիզմներ:

Այսպես, Հայաստանում այօր առկա են նի շարք իրավական ակտեր, որոնք միջազգային իրավական նորմերի իմալեմենտացիայի շնորհիվ կոչված են իրավական երաշխիքներ ստեղծել երեխաների իրավունքների պաշտպանության համար և ուղղված են սոցիալական խոչընդուակարելի վերացմանը: Եվ չնայած որ վերջիններս իրական սպառնալիք են բոլոր երեխաների իրավունքների իրականացման համար, առկա են որոշակի առավել խոցելի խմբեր, որոնք

<sup>1</sup> Այսօր աշխարհում ավելի քան 250 միլիոն երեխաներ ներգրավված են տարբեր տեսակի աշխատանքներում, որոնցից 150 միլիոնն աշխատում են վտանգավոր պայմաններում, որոնք նույնիսկ նման շահագործման ենթարկվելու դեպքում իրենց աշխատանքով չեն կարողանում ապահովել կենսական տարրական պայմաններ:

[www.childrensrightsportal.org](http://www.childrensrightsportal.org)

ավելի «զգայուն» են նման երևոյթների նկատմամբ: Սոցիալական և իրավական խոշընդուների մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ դրանք մեծ ազդեցություն են ունենում հաշմանդանություն ունեցող երեխաների, փախատականների և փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանության դեպքում, քանի որ յուրաքանչյուր անգամ սոցիալական և իրավական երաշխիքներ սահմանելիս պետք է հաշվի առնել, որ նման խմբերին պատկանող երեխաների նկատմամբ պետք է համապատասխան, և որոշ դեպքերում տարբերակված մոտեցում ցուցաբերել: Օրինակ՝ հաշմանդանություն ունեցող երեխաների իրավունքների իրականացման խոշընդուներ են սոցիալական մեկուսացվածությունը, բռնությունը, խտրականության դրսորումը, վերջիններիս համար կրթական, մշակութային կյանքի անմատչելիությունը, վատ վերաբերմունքը և այլն: Փոքրամասնությունների երեխաների դեպքում նման խոշընդուները կարող են արտահայտվել հասարակության կողմից արհամարհանքի, խտրականության, անուշադրության դրսորմամբ: Հասարակությունում ինտեգրվելու ճանապարհին բազմաթիվ այնպիսի խնդիրների են հանդիպում ինչպիսիք են օրինակ՝ ծնունդների գրանցումը, կրթական հաստատություններում նրանց տեղափորելը, իրենց մշակութային առանձնահատկությունները պահպանելու համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը և այլն:

Այսպիսով, կարելի է թվարկել Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության բազմաթիվ սոցիալական և իրավական խոշընդուներ, և պետք է նշել, որ դրանց վերացման գործում մեծ է իրավասու մարմինների դերը: Հայաստանի Հանրապետությունում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ երեխաների իրավունքների պաշտպանության Ազգային հանձնաժողով, ՀՀ մարզպետարանների երեխաների իրավունքների պաշտպանության բաժններ, խնամակալության և հոգաբարձության մարմիններ: Սակայն նոյնիսկ նման համակարգի առկայության դեպքում իրավիճակը ավելի քան հեռու է լավ լինելուց, առկա են մի շարք հիմնարար խնդիրներ, ինչը վկայում է հիշյալ մարմինների և մշակված իրավական համակարգի անկատար լինելու մասին:

### **3. Երեխաների իրավուների պաշտպանության իրավիճակը ՀՀ-ում**

#### ***Մանկադաւելու և խնամքի այլ հաստափություններ***

Հայաստանում գործում են 7 պետական և 4 ոչ պետական մանկատներ, իսկ խնամքի հաստատություններն են՝ երեխաների խնամքի և պաշտպանության պետական գիշերօրիկ հաստատությունները, հատուկ դպրոցները, բժշկասոցիալական վերականգնողական կենտրոնները, ցերեկային խնամքի կենտրոնները՝ հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով երեխաների համար, ներառական դպրոցները և մանկապարտեզները:

Այսօր Հայաստանում մանկատներում և խնամքի այլ հաստատություններում գտնվում է մոտ 4900 երեխա, որոնց 80 տոկոսն ունի առնվազն մեկ ծնող: Նրանցից մոտ 1000 երեխա ամեն օր գնում է տուն, իսկ մնացած 3900-ը գիշերում են հաստատություններում: Ըստ Աշխանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, ներկայումս իրենց ենթակայության տակ գտնվող հաստատություններում խնամվում է մոտ 1600 երեխա, որոնցից՝ 790-ը մանկատներում, իսկ 800-ը՝ գիշերօրիկ հաստատություններում: Իսկ Կրթության և գիտության ենթակայության տակ գտնվող հաստատություններում խնամվում է 2700 երեխա, որոնցից 1000-ը ամեն օր գնում է տուն:

Երեխաներին մանկատներ և խնամքի այլ հաստատություններ հանձնելու տարբեր պատճառներ գոյություն ունեն՝ ծնողների սոցիալական ծանր պայմանները, որի դեպքում վերջիններս հնարավորություն չեն ունենում իրենց երեխաների համար ապահովել նոյնիսկ տարրական կենսապայմաններ, երեխաների հաշմանդամությունը, որի դեպքում զրկված լինելով պետական որևէ աջակցությունից, համապատասխան անհրաժեշտ ծառայություններից օգտվելու հնարավորությունից ստիպված են լինում նրանց խնամքը հանձնել համապատասխան հաստատություններին, և որ ամենասարսափելին է՝ երեմն հրաժարվել երեխայի նկատմամբ ծնողական իրավունքից: Սակայն բացի վերոնշյալից, նման երևոյթների պատճառ է լինում նաև ծնողների անտարբերությունը երեխաների կյանքի և

նրանց ապագայի նկատմամբ, նրանց անպատճախանատվությունն ու եսափրությունը: Չատ դեպքերում ծնողները երեխաներին մանկատում կամ խնամքի այլ հաստատություններ հանձնելուց հետո այլևս չեն ցանկանում նրանց ետք բերել: Որոշ դեպքերում պատճառ է հանդիսանում ծնողների ավելորդ պատճախանատվությունից զերծ մնալու ցանկությունը, իսկ մյուս դեպքերում էլ, տեսնելով, որ նման հաստատություններում երեխաները ապրում են համեմատաբար լավ պայմաններում՝ գտնում են, որ երեխայի համար այնտեղ մնալը լավագույն որոշումն է, անտեսելով նրանց ընտանիքում մեծանալու իրավունքը, սիրո և ջերմության կարիք ունենալու հանգամանքը: Եվ եթե նման հաստատություններում երեխայի գտնվելու դեպքում լուծվում են կենսական մի շարք խնդիրներ, ինչպիսիք են կացարանի, հագուստի և սննդի խնդիրները, ապա դա չի նշանակում, որ այստեղ առկա են նրանց բոլոր բնական իրավունքների իրականացման համար անհրաժեշտ պայմանները:

Պետության կողմից ոչ բավարար ֆինանսավորման և կոռուպցիոն երևույթների առկայության պայմաններում նման հաստատություններում երեխաները բախվում են մի շարք խնդիրների:

Օրինակ, բազմիցս տարբեր լրատվամիջոցների և հասարակական մի շարք կազմակերպությունների կողմից բարձրաձայնվել են «Գյումրու «Երեխաների տուն» մանկատան» առկա մի շարք խնդիրները: Այստեղ խնամքում են 0-6 տարեկան երեխաներ, որոնք ունեն առողջական և զարգացման մի շարք լուրջ խնդիրներ: Բազմաթիվ վկայություններ փաստում են այն մասին, որ այստեղ առկա են սանիտարահիգիենիկ բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ պատշաճ կերպով չի պահպանվում երեխաների սենյակների մաքրությունը, ժամանակին չեն փոխվում և լվացվում նրանց հագուստները: Կան նաև մի շարք խնդիրներ կապված շենքային պայմանների հետ: Կարանտինային բաժանմունքում, որը գտնվում է հին մասնաշենքում, երեխաները ողջ օրը պառկած են չոր մահճակալների կամ աթոռների վրա՝ գարշահոսության մեջ, իսկ շենքի պատերը խոնավությունից կիսաքանդ են:

Նման խնդիրներ հայտնաբերվեցին նաև այլ մանկատներում և խնամքի հաստատություններում: Կատարված ուսումնասիրութ-

յունների ընթացքում արձանագրվել է, որ մանկատների և հատուկ դպրոցների շենքերի մեծ մասը հին է և վերանորոգման կարիք ունի, իսկ որոշները նույնիսկ կարսայատներ չունեն դրամք ջեռուցելու համար: Որոշ հատատություններում առկա են և նաև գերծանրաբեռն-վածության խնդիր: Օրինակ՝ Խարբերդի հատուկ մանկատանը երեխայի համար նախատեսված սենյակներում բնակվում են 10-12 երեխաներ և վերջիններս ազատ տարածքի բացակայության պատճառով ազատ տեղաշարժվելու հնարավորություն չունեն, ինչը խնդիրներ է առաջացնում հատկապես սայլակների դեպքում: Որոշ հիվանդներ անհասկանալի պատճառով շարունակում են մնալ մինչև 25-30 տարեկան հասակը, մինչդեռ ըստ հաստատված կանոնակարգի՝ 18 տարեկանը լրանալուց հետո նրանք պետք է տեղափոխվեն Վարդենիսի հոգեբուժական տուն-ինտերնատ:

Մանկատներում և խնամքի այլ հաստատություններում բացակայում են նաև բավարար քանակի մասնագետներ, տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար, արդյունքում՝ երեխաները չեն ստանում անհրաժեշտ խնամք և հոգատարություն: Իսկ առկա մասնագետները որևէ դասընթաց, վերապատրաստում չեն անցնում աստիճանաբար զարգացող աշխատանքի մեքողներին ծանոթանալու և դրամք պրակտիկայում կիրառելու համար:

Որոշ հատուկ դպրոցներում առողջ երեխաներին պահում են մտավոր խնդիրներ ունեցողների հետ: Պատճառն այն է, որ նմանատիպ հաստատությունները ֆինանսավորվում են երեխաների քանակին համապատասխան, հետևաբար հատուկ կարիք ունեցողի անվան տակ երեխային ձևակերպում և ներառում են այդ մանկատուն, արդյունքում՝ խեղաքյուրվում է առողջ երեխայի զարգացումը, վերջինս ունենում է թերի ունակություններ և այլն: Կրկին վերադառնալով Գյումրու «Երեխաների տուն» մանկատանը՝ պետք է նշել, որ համապատասխան փորձագետների այցելությունների ընթացքում արձանագրվել է, որ լավ չեն ապահովվում երեխաների կրթության, ուսուցման, առողջության պահպանման խնդիրները: Միջոցներ չեն ձեռնարկվում երեխաների մանկապարտեզ հաճախելն ապահովելու

համար, այդ պատճառով 6-7 տարեկան խոլ ու համր երեխաներ կան, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում հաղորդակցվել:

Այսպիսով, ինչպես արդեն նշվեց, չնայած որ մանկատները և խնամքի այլ հաստատությունները երեխաների համար լուծումներ են առաջարկում մի շաբթ խնդիրների համար, այնուամենայնիվ հնարավոր չէ պնդել, որ նման հաստատություններում երեխաները մեծանում են ամբողջովին առողջ միջավայրում և ապահովում է նրանց իրավունքների իրականացումը: Չնայած որ նրանց տրամադրվում է ապաստան, սնունդ, կենցաղային խնամք, բարեկեցության ինչ որ մի մակարդակ, այնուամենայնիվ դրանք վերաբերում են միայն ֆիզիկական պահանջնունքների բավարարմանը, և մի շաբթ կարենոր իրավունքների իրականացումն ամբողջովին անտեսվում է: Մասնավորապես՝ նման երեխաները սիրո միջավայրում չեն մեծանում, ինչն էլ խորը ազդեցություն է բռնում նրանց հոգեբանական զարգացման վրա, առաջանում է բերարժեքության բարդույթ, նրանց մոտ չեն ձևավորվում ընտանեկան և ծնողական ունակությունները, պատասխանատվության և ինքնուրույնության զգացողությունները, հաճախ պիտակավորվում են հասարակության կողմից, որն էլ հանգեցնում է մեկուսացման: Համապատասխան ուսումնասիրությունները փաստում են նաև, որ նման հաստատություններում երեխաների բռնության ենթարկվելու ռիսկը վեց անգամ ավելի է քան ընտանիքում: Նման պայմաններում, ակնհայտ է, որ հնարավոր չէ խոսել երեխաների պաշտպանված լինելու, նրանց իրավունքների իրականացման համար անհրաժեշտ պայմանների առկայության մասին:

Իրավիճակը փոխելու համար ՀՀ կառավարության կողմից մշակված երեխաների պաշտպանության 2004-2015թ. ազգային ծրագրում նախատեսվել է «Մանկական խնամակալական կազմակերպությունների բեռնաբափման» գործընթաց, որը սկսվել է իրականացման 2006թ.-ից: Այս գործընթացի նախատեսումը պայմանավորված էր նաև Հայաստանի կողմից ստորագրված ՍԱԿ-ի «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներից, համաձայն որի, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման համար, իսկ նման հաստատություններում նրանց տեղափորումը պետք է դիտվի

որպես ծայրահեղ միջոց: Ընդհանրապես միջազգային պրակտիկայում ընդունված է այն մոտեցումը, համաձայն որի, մանկատները առանց ծննդական խնամքի մնացած երեխայի համար պետք է ծառայեն որպես ժամանակավոր միջոց, բնակության վայր մինչև ընտանիքում տեղափորելը կամ այլնատրանքային ծառայություն մատուցելը, սակայն չպետք է 18 տարի շարունակ նրանց ապահովեն տանիքով: Հետևաբար ՀՀ կառավարության կողմից հիշյալ գործընթացի իրականացումն ամբողջովին արդարացված է:

Ինչ վերաբերում է ներկայումս գործող մանկատներում և խնամքի այլ հաստատություններում առկա խնդիրներին, ապա դրանց աշխատակիցների և տնօրենների կողմից մշտապես հիշատակում է բավարար ֆինանսավորման բացակայությունը: Եվ շնայած պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներին և տարբեր միջազգային կազմակերպությունների և բարերարների կողմից տրամադրվող օգնություններին, որոշ վայրերում առկա է նույնիսկ նվազագույն կենցաղային պայմանների ապահովման խնդիր: ՀՀ դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2009 և 2010թթ. տնօրենների նկատմամբ քրեական գործերի հարուցումը վկայում է այն մասին, որ այստեղ անհրաժեշտ է արդյունավետ միջոցներ նախատեսել կոռուպցիայի և այլ չարաշահումների դեմ պայքարի համար: Եվ հաշվի առնելով, որ նման դեպքերում խախտվում են հասարակության ամենախոցելի խճերից մեկի՝ երեխաների իրավունքները, հիշյալ մեխանիզմների նախատեսումը ավելի հրատապ բնույթ է կրում:

## ***Խնամապար ընդունելու պահանջներ***

2006թ.-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց «Կյանքի դժվարին իրավակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010թթ. ռազմավարությունը», որով սահմանված հիմնական նպատակներին հասնելու համար կազմակերպվող միջոցառումների շարքում էր նաև խնամատար ընտանիքների ինստիտուտի ստեղծումը: Դրա հիմնական նպատակը երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահո-

վումն է: Այն կարելի է ասել փոքր մանկատուն է, որտեղ գործում է պետության կողմից վարձատրության սկզբունքը՝ երեխայի դաստիարակությամբ և խնամքով գրաղվող ընտանիքը վարձատրվում է օրենքին համապատասխան՝ նվազագույն աշխատավարձի չափով: Խնամատար ընտանիքների ներդրման ծրագիրը սկսվել է իրականացվել 2006-2007թթ.-ից երբ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսավորմամար ընտրվեցին 20 խնամատար ընտանիքներ: Եվ քանի որ իրականացված փորձը հաջող էր, 2008թ.-ի մայիսի 8-ին ընդունվեց «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխային պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով կարգավորվում էր իիշյալ ողջ գործընթացը: Խնամատար ընտանիքները ընտրվում են նույն կարգով և չափանիշներով, ինչ երեխային որդեգրելու ցանկություն ունեցողները՝ համապատասխան կենացայնանների և բարոյահոգեբանական առողջ մքնուրութիւնումնախրության, սոցիալական և այլ պայմանների առկայության դեպքում:

Խնամատար ընտանիքում գտնվելու փաստով երեխայի կենացայնական ծնողների իրավունքները նրա նկատմամբ չեն դադարում, և ծնողները կարող են հետ վերցնել երեխային խնամատար ընտանիքից: Չնայած նման դեպքները կարող են առաջացնել հոգեբանական խնդիրներ, այնուամենայնիվ խնամատար ընտանիքները արդյունավետ գործիք կարող են լինել, ինչպես արդեն նշվեց, երեխայի ընտանիքում մեծանալու իրավունքի ապահովման համար: Բացի դրանից, այսօր մանկատներում գտնվող երեխաների 80-90 տոկոսը որդեգրման ենթակա չեն, հետևաբար խնամատար ընտանիքը այլընտրանք է հանդիսանում նման երեխաների համար:

Ներկայումս խնամատար ընտանիքների ընտրությամբ գրափում են խնամակալության և հոգաբարձության համայնքային խորհուրդները, սակայն այս մարմինների գործունեության մեջ առկա են մի շարք խնդիրներ, որոնց սույն վերլուծություն մեջ կանդրադառ-

նանք ավելի ուշ, իսկ դրանց առկայությունը լուրջ խոչընդոտ կարող է հանդիսանալ ճիշտ ընտրություն կատարելու և երեխայի իրավունք-ների պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար: Այս առումով քերևս նախընտրելի է միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդնումը, որն արդյունավետ միջոց կիանդիսանա ինսամատար ընտանիքների և այնտեղ գտնվող երեխաների իրավիճակի վերահսկողության համար: Այստեղ ևս անհարժեշտ է նախատեսել բոլոր անհրաժեշտ մեխանիզմները մասնագետների մասնագիտական ունակությունների զարգացման, ինչպես նաև ընտրության անհրաժեշտ չափանիշների սահմանման համար: Նման դեպքերում պետք է հաշվի առնել ոչ միայն ընտանիքի նյութական կարողությունները, այլև երեխային սիրո և ջերմության մթնոլորտում մեծացնելու հնարավորությունները:

Ավելին՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ կատարված ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր եղավ ցույց տալ, որ այս ինստիտուտի ներդնումը ավելի քիչ ծախսեր է պահանջում, քան օրինակ՝ մանկատներում երեխաների համար հատկացվող գումարների չափը: Այսպես՝ ըստ կատարված հետազոտությունների մանկատներում պետության կողմից յուրաքանչյուր երեխայի համար հատկացվում է մոտավորապես 3800 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, մինչդեռ խնամատար ընտանիքների դեպքում այն կազմում է 2800:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալ, ակնհայտ է դառնում, որ խնամատար ընտանիքի ինստիտուտը արդյունավետ մեխանիզմ է հանդիսանում երեխայի մի շարք կարևոր իրավունքների պաշտպանության համար: Դրա կարևորությունը կայանում է նրանում, որ այստեղ խոսքը գնում է երեխաների այնպիսի խոցելի խմբի մասին, որոնք ինչ-ինչ պատճառներով զրկված են ընտանիք ունենալու, ծնողական խնամք և հոգատարություն զգալու, առողջ մթնոլորտում մեծանալու հնարավորութունից: Այդ իսկ պատճառով պետության խնդիրը այստեղ ոչ միայն հիշյալ ինստիտուտի ներդնումն է, այլև դրա զարգացման և կիրառման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը և դրանց գործածության նկատմամբ վերահսկողության սահմանումը: Այնուամենայնիվ, 2007թ.-ից մինչ օրս խնամատար ըն-

տանիքների թիվը չի ավելացել, և կարելի է ասել առկա է որոշակի լճացում, ինչը բացատրվում է նախ հասարակության ոչ տեղեկացված լինելու հանգանաճով, և իհարկե՝ պետության կողմից ակտիվ քայլեր չձեռնարկելով՝ մշտապես պատճառաբանելով ֆինանսական անհրաժեշտ միջոցների բացակայությամբ, ինչպես նաև առկա միջոցները ոչ արդյունավետ և նպատակային օգտագործելով:

### **Խնամակալության և հոգաբարձության մարմիններ**

ՀՀ կառավարությունը 2011թ. փետրվարի 24-ին ընդունված թիվ 164 Ն որոշմամբ հաստատեց Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, որով այս մարմինների համար որպես խնդիրներ սահմանվեցին անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև անշափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի, կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ բվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը:

Կառավարության հիշյալ որոշմամբ հաստատվեց նաև Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ստեղծումը, որը գործում է հասարակական հիմունքներով և կարող է կազմված լինել տվյալ համայնքի, քաղաքետարանի, ոստիկանության, դպրոցների, մանկապարտեզների, երեխաների հիմնախնդիրների հետ առնչվող պատասխանատու տարրեր կառույցների ներկայացուցիչներից: Կազմավորման նման կարգի պատճառով դրանք հաճախ դժվարություններ են կրում երեխայի հետ կապված խնդիրների լուծման կամ իրավիճակին համարժեք որոշումների ընդունման գործընթացում:

Վերջերս հաճախ են բարձրաձայնվում խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության ընթացքում առաջացած և նրանց կողմից բույլ տրված խախտումների մասին, որոնք հանդիսանում են տարրեր հանգանաճների առկայության արդյունք:

Այսպես, հաճախ հոգաբարձության և խնամակալության մարմինները կրում են ձևական բնույթ և պատշաճ կերպով չեն կատարում իրենց վրա դրված պարտականությունները, արդյունքում՝ անիմաստ է դառնում երեխանների իրավունքների և շահերի պաշտպանության մասին խոսելը: Որպես օրինակ կարելի է նշել վերջերս լրատվամիջոցներով բարձրածայնված մի դեպքի մասին, երբ 6-ամյա երեխայի նկատմամբ միայն դատական կարգով հայրությունը ճանաչած հայրը նրան խարեւությամբ վերցրել էր մոր խնամքից և ապօրինաբար մորն արգելել շփվել երեխայի հետ: Հարցը բազմից ներկայացվել է Շենգավիթ Վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնին, սակայն վերջինս անհրաժեշտ որևէ քայլ չեր ձեռնարկել իրավիճակը շտկելու համար: Երեխայի խնամակալության վերաբերյալ յուրաքանչյուր գործով խնամակալության և հոգաբարձության մամինը դատարան է ներկայացնում իր եղբակացություն՝ կապված հարցի լուծման հետ, որը կազմվում է ծնողներից երկուսի առողջական, սոցիալական, բարոյական հատկանիշների մանրամասն ուսումնասիրության արդյունքում: Այս դեպքում դատարանում գործը լսելիս Շենգավիթ Վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմննն այդպես էլ չկատարեց եզրակացություն ներկայացնելու իր պարտականությունը, ճնայած այդ կապակցությամբ դատական նիստերի պարբերաբար հետաձգմանը:

Նման մոտեցումների պատճառ է հանդիսանում այն, որ հանձնաժողովների աշխատանքը հասարակական բնույթ է կրում, նրանց անդամները այս ոլորտում պրոֆեսիոնալիզմ և բարձր մոտիվացիա չունեն: Նրանք հիմնականում առաջնորդվում են իրենց սոցիալական փորձով, սեփական հայացքներով, ինտուիցիայով, որոնք հաճախ կարող են չբխել երեխայի շահերից: Հետևաբար՝ յուրաքանչյուր գործով հանձնաժողովը միանգամյա գործողություն է կատարում և առկա է պրոցեդուրալ խնդիր:

Այնպիսի իրավասությունների իրականացումը ինչպիսիք են օրինակ 14 տարին չլրացած անշափահասների, հոգեկան խանգարումների պատճառով անգործումակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ խնամակալության, իսկ 14-18 տարեկան անշափահաս-

ների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ հոգաբարձություն նշանակելը, երեխայի դաստիարակությանը հավակնող անձի կյանքի պայմանների հետազոտության իրականացումը և հետազոտության ակտի ու դրա հիմն վրա վեճի էության մասին եզրակացության ներկայացումը դատարան, խնամատար ծնողների նկատմամբ վերահսկողության իրականացումը և այլն պահանջում են խիստ մասնագիտական մոտեցում, յուրաքանչյուր դեպքում իրավիճակի խորը վերլուծություն ոչ միայն սեփական հայացքների և համոզնունքների համաձայն, այլև հստակ սահմանված շափորշիչների և մեթոդների կիրառմամբ։ Այս առումով շատ կարևոր է խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը, նրանց մոտ բավարար տեղեկատվության առկայությունը, երեխաների և ծնողների հետ շփման մի շարք հմտությունների զարգացումը։ Բազմաթիվ որդեգրման ձախողված դեպքերի վերլուծությունները վկայում են այն մասին, որ նման գործընթացներում եզրակացությունները հիշյալ մարմինների կողմից տրվել են միայն որդեգրողների նյութական հնարավորությունները հաշվի առնելու արդյունքում, և անտեսվել են հոգեբանական մի շարք կարևոր հանգամանքներ։

Խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու մասին են վկայում նաև բազմաթիվ երեխաների ծնունդները զգրանցելու փաստը։ Պատճառն այն է, որ վերջիններս հետևողական աշխատանք չեն կատարում իրենց համայնքներում զգրանցված ծնունդների հայտնաբերման և դրանց իրականացման ուղղությամբ։ Արդյունքում՝ բազմաթիվ երեխաներ դուրս են մնացել նաև հանրակրթությունից։

Անհրաժեշտ է նաև ապահովել խնամակալության և հոգաբարձության մարմինների ակտիվ մասնակցությունը անշափահասների շրջանում հանցավորության դեմ պայքարին։ Վերջիններիս միջամտությունը թերևս պետք է դրսևորվի որպես սոցիալական աշխատողի գործունեության իրականացում։

Խոսելով խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության մեջ առկա թերությունների պատճառների մասին՝

պետք է նշել մեկ հանգամանք ևս: ՀՀ կառավարությունը 2011թ. փետրվարի 24-ին ընդունված թիվ 164 Ն որոշմամբ սահմանված կանոնադրության 10-րդ կետի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է իր կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան: Այսինքն՝ հանձնաժողովը կարող է ազատորեն լուծել ոչ միայն իր կազմակերպական կառուցվածքին և մասնագետներ ընդգրկելուն վերաբերող հարցերը, այլև կամայական նոտեցում ցուցաբերել երեխաների համար մի շարք բախտորոշ հարցերին: Հետևաբար բազմաթիվ խնդիրներից, երեխաների իրավունքների խախտումներից և շահերի անտեսումից խուսափելու համար անհրաժեշտ է օրենսդրական ձևակերպում տալ վերոնշյալ հարցերին և օրենքով կարգավորել երեխայի դաստիարակության, տեսակցության հարցերը, դրանց իրականացման կարգը և այլն: Այստեղ պետության խնդիրն է ապահովել երեխաների իրավունքների պաշտպանության մարմինների աշխատանքների համակարգվածությունը և արդյունավետ միջոցներ ձեռնարկել գործառույթների ձևական իրականացումը արդյունավետ իրականացման վերափոխելու ուղղությամբ:

## **Կրրուրյուն**

Երեխայի կրրության իրավունքի ապահովումը նախատեսված է երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող բոլոր միջազգային փաստաթղթերում և Հայաստանի Հանրապետությունը դրանք վավերացնելով պարտավորվել է քայլեր ձեռնարկել այն բոլորին հասանելի դարձնելու համար: Այնուամենայնիվ այսօր առկա են մի շարք ոլորտներ, որտեղ երեխաները գրկված են իրենց հանրակրթության իրավունքի իրականացման հնարավորությունից:

Նախ և առաջ պետք է նշել հաշմանդամություն ունեցող երեխաների կրրության իրավունքի իրականացման հետ կապված խնդիրները: Այսօր Հայաստանում գործում են հատուկ դպրոցներ, որոնք նախատեսված են այդ երեխաների համար, սակայն միայն դրանց առկայությամբ երեխաների իրավունքների իրականացման խնդիրը լուծված համարել հնարավոր չէ: Կրրության որակը բավա-

կանին ցածր է, և պարբերաբար ուսուահարվում են երեխաների իրավունքները: Պատճառն այն է, որ նման դպրոցներում սովորող երեխաները գտնվում են սոցիալական մեկուսացվածության մեջ և կարելի է ասել առկա է որոշակի անհավասարություն իրենց մյուս հասակակիցների նկատմամբ: Հաճախ չնշին անկարողություններ ունեցող երեխաները տեղափորվում են հատուկ դպրոցներում, որպեսզի խուսափեն հանրակրթական դպրոցներում հոգեբանական նշումներից և բացի կրթական ծառայություններից ստանան սնունդ և հագուստ:

Բացի դրանից, հատուկ դպրոցներում կրթության որակը զիջում է հանրակրթական ընդհանուր դպրոցներին, քանի որ առկա է նախ՝ մասնագետների պակաս, այնուհետև նրանց վերապատրաստման և մասնագիտական ունակությունների զարգացման անհրաժեշտություն և հանրակրթական համապատասխան ծրագրեր: Նման ուսումնական հաստատություններում երեխաների քաղաքացիական հմտությունների զարգացումը և իրավունքների պաշտպանությունը ֆորմալ է և ոչ արդյունավետ: Ներկայիս առաջընթացի պայմաններում հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու, նրանց կրթելու մերողները մշտապես զարգացում են ապրում, ստեղծվում են դրանք պրակտիկայում կիրառելու ավելի արդյունավետ միջոցներ, որոնք գործածելու համար անհրաժեշտ է պետական աջակցություն ֆինանսավորման և տարբեր այլ նախաձեռնությունների տեսքով, որոնք կնպաստեն համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Մեկ այլ խնդիր կապված է այն երեխաների կրթության հետ, որոնք նախկինում գտնվել են զիշերօթիկ հաստատություններում որտեղ ուսուցումը կատարվել է հատուկ ծրագրերով: 2007թ.-ից վերջիններս վերափոխվել են խնամքի և պաշտպանության կենտրոնների, իսկ երեխաները սկսել են հաճախել հանրակրթական դպրոցներ և ներկայումս դժվարությունների են հանդիպում ուսուցման հարցում:

Երեխայի ընտանիքից չհեռանալու խնդրի լուծման և կրթության իրավունքի արդյունավետ իրականացման մեխանիզմ կարելի է համարել ներառական կրթության ինստիտուտի կիրառումը: Այն առաջին անգամ փորձնական կիրառություն ստացավ «Հույսի կամուր-

զ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, և իրականացված հաջող փորձը հիմք հանդիսացավ ներառական կրթության քաղաքականության, օրենքի և ռազմավարության մշակման համար, իսկ 2005թ.-ի սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Ներառական կրթությունն այնպիսի ծրագիր է, որը բացառում է երեխանների նկատմամբ խորականության որևէ տեսակի դրսւորում, ապահովում է հավասար վերաբերմունք և հնարավորություններ բոլորի համար և ստեղծում է անհրաժեշտ պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող երեխանների համար: Ներառական կրթության շնորհիվ հաշմանդամ երեխանները ստիպված չեն լինի հեռանալ ընտանիքից, իսկ բեռնաբափված հատուկ դպրոցներում աշխատող մասնագետները կարող են իրենց փորձն օգտագործել նման դպրոցներում աշխատելու ընթացքում: Այսօր Հայաստանում գործում են 60 ներառական դպրոցներ, որտեղ սովորում են կրթական առանձնահատուկ կարիքներ ունեցող 1400 երեխաններ, մինչդեռ նման երեխանների թիվը զգալիորեն ավելի մեծ է: Եվ չնայած այս ինստիտուտի ներդնմամբ դրականորեն փոխվեց հասարակության վերաբերմունքը նման խնդիրներ ունեցող երեխանների նկատմամբ, այնուամենայնիվ բազմաթիվ ծնողների մոտ առկա է վստահության պակաս այդպիսի դպրոցների պայմանների, այնտեղ աշխատող մասնագետների և դրանցում դասավանդվող ծրագրերի նկատմամբ:

Խոսելով կրթության իրավունքի իրականացման մասին անհրաժեշտ է անդրադառնալ նաև քրեակատարողական հիմնարկում գտնվող անշափահասներին: Տարբեր հասարակական և այլ կազմակերպությունների կողմից կատարված դիտարկումների արդյունքներից ակնհայտ է դարձել, որ առկա է անշափահաս դատապարտյալների կրթության իրավունքի իրականացման խնդիր: Այսպես՝ «Արովյան» քրեակատարողական հիմնարկում գործում է մեկ հանրակրթական դպրոց, որն ավարտելուց հետո երեխանները ստանում են հանրակրթական դպրոցի ավարտական վկայական, որտեղ որևէ նշում չկա դրա քրեակատարողական հիմնարկի տարածքում գտնվելու մասին, ինչը բերևս կարելի է դրական համարել: Սակայն

հիշյալ դպրոցում չկան անհրաժեշտ մասնագետներ, հոգեբաններ, որոնք ունեն նման երեխանների հետ աշխատելու հատուկ ունակություններ, հանրակրթական դպրոցի ծրագրերում ներառված որոշ առարկաներ են չեն ուսուցանվում:

Ինչ վերաբերում է անշափահաս կալանավորներին, ապա զունվելով մեկուսարանում՝ վերջիններս ամբողջությամբ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից: Փաստորեն նրանց մեղքը դեռևս ապացուցված չէ, սակայն արդեն իսկ զրկված են կրթության իրավունքի իրականացման հնարավորությունից:

## **4. Երեխաների իրավունքների պաշտպանության հիմնական խնդիրները և առաջարկվող լուծումները**

Երեխաների իրավունքների պաշտպանության մի շարք ոլորտների ուսումնասիրությունների արդյունքներից պարզ երևում է, որ այստեղ առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն և պահանջում են համակարգային բարեփոխումներ՝ արդյունավետ միջոցների նախատեսման և օրենքի արդյունավետ կիրառման միջոցով:

Այսպես, կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաներին առաջարկվող պետական օգնության հիմնական ձևը շարունակում է մնալ երեխայի հեռացումը ընտանիքից և նրա տեղափորումը տարաբնույթ հաստատություններում, որը չի բխում ոչ երեխայի շահերից քանի որ վտանգվում է նրանց սոցիալական հեռանկարը, և ոչ էլ պետության շահերից՝ պահանջելով ֆինանսական մեծ ծախսեր:

Մանկատների և խնամքի հատուկ հաստատությունների բեռնաբախման արդյունավետ իրականացման համար կարևոր նախապայման կարող են հանդիսանալ սոցիալական ապահովության ոլորտի բարեփոխումները: Կարենք են նաև այլլուստրանքային ծառայությունների կայուն համակարգի ստեղծումը, որոնց միջոցով դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքներին կցուցաբերվի նյութական և հոգեբանական աջակցություն: Անհրաժեշտ է հանրապետության ողջ տարածքում ստեղծել մասնագիտական կենտրոններ, որպեսզի հատուկ վերապատրաստում անցած մասնագետները կարողանան հոգեբանական և խորհրդատվական ծառայություններ մատուցել բարդ իրավիճակներում հայտնված ընտանիքներին և խնդիրներ ունեցող երեխաներին: Ծնողների տարբեր խմբերի հետ տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքները ցույց են տվել, որ նրանցից շատերը լավ չեն հասկանում ծնողի դերը և կարևորությունը երեխայի կյանքում, այդ պատճառով էլ պատահում են դեպքեր, երբ խնամքի հաստատություններում երեխաներին տեղափորելուց հետո խուսափում են նրանց այցելել կամ տուն տանել, արդյունքում՝ կտրվում է ծնող-երեխա կապը: Այդ պատճառով արդ-

յունավետ կլիներ նաև նման ծնողների համար շարունակական կրթություն կազմակերպել դասախոսությունների, խորհրդատվությունների, ընտանիքներ այցելությունների միջոցով, որոնց արդյունքում ծնողները կկարողանան արժևորել երեխաներին, ավելի պատասխանատու լինել նրանց նկատմամբ և ցանկացած խնդիր չվերագրել ֆինանսական և սոցիալական անապահովությանը:

Կարևոր է նաև առկա ցերեկային խնամքի կենտրոնների գարգացումը և նորերի ստեղծումը, որոնց շնորհիվ հաշմանդամություն ունեցող երեխաները ստիպված չեն լինի կտրվել ծնողներից և ապրելով ընտանիքում՝ կստանան անհրաժեշտ օգնություն, իսկ ծնողների համար երեխաների խնդիրները պատճառ չեն հանդիսանա նրանցից հրաժարվելու համար: Հետևաբար դրանք արդյունավետ միջոց կդառնան կենսաբանական ընտանիքների վերամիավորման, և ընդհանրապես, ընտանիքների զարգացման համար: Կենտրոնների մասնագետները՝ հոգեքանները, սոցիալական աշխատողները և մանկավարժները համապատասխան աշխատանքներ կկարողանան տանել ծնողների և երեխաների հետ և կօգնեն նրանց դուրս գալ ճգնաժամային իրավիճակից: Այսպիսով կլուծվեն նաև հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության հետ կապված հարցերը: Այսօր կան երեխաներ, որոնք համրակրթությունից դուրս են մնում քանի որ ծնողը ամաշում կամ զլանում է զբաղվել դպրոցի խնդիրներով, իսկ ցերեկային խնամքի կենտրոնները արդյունավետ լուծում կարող են հանդիսանալ այդպիսի դեպքերի համար: Անհրաժեշտ է նման կենտրոններ ստեղծել ոչ միայն Երևանում, այլև մարզերում՝ դրանց մատչելիությունն ապահովելու համար: Հաշմանդամություն ունեցող երեխաներով ընտանիքներին օժանդակություն կարելի է ցուցաբերել նաև երեխայի կարիքների բավարարման համար ծնողներին կատարվող հավելյալ վճարումների, սոցիալ-վերականգնողական ծառայություններ առաջարկելու միջոցով:

Խոսելով հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանությունից՝ պետք է նշել, որ չլուծված է մնում նաև նրանց բազմաթիվ իրավունքների իրականացման հետ կապված հարցերը՝ առողջության պահպանման, ազատ տեղաշարժման, հանգստի կազմակերպման և անցկացման, տարբեր միջոցառումնե-

թին նրանց մասնակցության, և ընդհանրապես, առկա է հասարակությանը ինտեգրվելու խնդիր: Նման խնդիրներ ունեցող երեխաները գտնվում են մեկուսացվածության մեջ, քանի որ հասարակության անդամների կողմից չեն ընկալվում որպես իրավահակասար, լիրավանդամ: Այս առումով իրատապ է նաև հասարակության անդամների գիտակցության վրա ներազդելուն ուղղված միջոցառումների իրականացումը, ընդ որում կրկին ոչ միայն Երևանում այլև Հանրապետության բոլոր մարզերում:

Կարևոր է իրականացնել երեխաներին մանկատուն և խնամքի այլ հաստատություններ հանձնելու շափանիշների խատացում, և միևնույն ժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել արդեն խսկ խնամքի հաստատություններում գտնվող երեխաներին վերատեղափորելու համար: Այս առումով արդյունավետ կլինիկ խնամատար ընտանիքի ինստիտուտի նախատեսումը, փոքր ընտանեկան տների ստեղծումը, կենսաբանական ընտանիք վերադարձնելու արդյունավետ մեխանիզմների նախատեսումը: Վերջինիս առումով անհրաժեշտ է նաև վերանայել որդեգրման գործընթացը և քաշքուկներից խուսափելու համար այն պարզեցնել հայ ընտանիքների համար, խսկ օտարերկրյա ընտանիքների համար՝ ընդհակառակը՝ լրացուցիչ անհրաժեշտ երաշխիքների համակարգ սահմանել: Որդեգրման թեկնածուները պետք է անցնեն ավելի մասնագիտացված, քան ֆորմալ գնահատում, ինչպես նաև անհրաժեշտ ուսուցում անցնեն մինչև որդեգրությունը, խսկ որդեգրումից հետո նախատեսվեն վերահսկողության ծառայություններ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է վերանայել երեխաների նկատմամբ խնամքից փաստացի խուսափող ծնողների նկատմամբ ցուցաբերվող շափազանց լոյալ վերաբերմունքը, որոնք պահպանում են երեխայի նկատմամբ ծնողական իրավունքները և արդյունքում երեխան որդեգրման ենթակա չի լինում: Ստացվում է մի իրավիճակ, երբ ծնողները երեխայի նկատմամբ իրենց պարտականությունները անպատճախանատու և գիտակից մոտեցում չցուցաբերելու պատճառով փոխանցում են պետությանը, սակայն պահպանում են նրանց նկատմամբ իրավունքները, արդյունքում՝ հնարավոր չի լինում պաշտպանել երեխայի շահերը:

Կրկին անդրադառնալով անչափահաս դատապարտյալների խնդրին՝ կարևոր է նշել, որ անհրաժեշտ է վերանայել նրանց կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը և բարեփոխումներ իրականացնել այս համակարգում: Մասնավորապես, ապահովել հանրակրթական ընդհանուր ծրագրերում ներառված բոլոր առարկաների ուսուցումը, ապահովել անհրաժեշտ քանակի մասնագետներով և վերջիններիս համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպել այս խմբի երեխաների հետ վարվեցողության, նրանց հոգեվիճակի վերլուծության, անհրաժեշտ հոգեբանական մուտքում ցուցաբերելու հմտություններ ձեռք բերելու համար:

Վերոնշյալ բոլոր առաջարկների իրականացման հիմքում ընկած է անհրաժեշտ բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետների առկայությունը: Ինչպես ցույց է տալիս իրավիճակային վերլուծությունը, ներկայումս խնամակալության և հոգաբարձության մարմինները միայն ֆորմալ ձևով են իրականացնում իրենց դերը երեխաների իրավունքների ապահովման և շահերի պաշտպանության հարցում: Այդ պատճառով անհարժեշտ է նախ՝ իրախուսման մեխանիզմներ ներդնել պարտաճանաչ խնամակալների և հոգաբարձուների ներգրավման համար, ինչպես նաև վերացնել հիշյալ մարմինների դերի սահմանափակումը միայն որոշակի խմբի երեխաների հետ աշխատանքում, քանի որ այդպիսով երեխաների մեկ այլ խումբ գրկվում է նրանց աջակցությունից:

Այսօր հաճախակի են դարձել նաև երեխաների նկատմամբ բռնության դրսևորման դեպքերը, որն իրականացվում է ինչպես տանը ընտանիքի անդամների կողմից, այնպես էլ դրսում՝ հասարակության այլ անդամների կողմից, ընդ որում՝ բռնությունը դրսևորվում է թե ֆիզիկական և թե հոգեբանական ձևով: Լինելով հասարակության ամենախոցելի խմբերից մեկը, երեխաներին նման երևոյթներից պաշտպանելու համար անհրաժեշտ է կայուն երաշխիքների սահմանում: Այդ պատճառով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դաստիարակության մեթոդների փոփոխման վերաբերյալ ծրագրերի իրականացման համար: Այստեղ պետք չէ սահմանափակվել միայն իրազեկելով, այլև երեխաներին որոշակի գործիքներ սովորեցնել նման իրավիճակներից խուսափելու և պաշտպանվելու համար: Այ-

սօր Հայաստանում չկան սեռական և այլ տեսակի բռնություններից տուժած երեխաների և նրանց ծնողների վերականգնման համար նախատեսված մասնագիտացված կենտրոններ, այդ պատճառով նման դեպքերից հետո վերջիններս մեծ խնդիրներ են ունենում կրկին հասարակությանը լիարժեք ինտեղրվելու հարցում։ Հետևաբար պետք է ստեղծվեն հաստատություններ, որոնք անհրաժեշտության դեպքում հոգեբանական և նյութական օժանդակություն կցուցաբերեն նման անձանց։

## **5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դերը երեխաների իրավունքների պաշտպանության գործում**

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում համապատասխան մասնագիտացված ստորաբաժանման ստեղծումը լրացուցիչ արդյունավետ երաշխիք կարող է հանդիսանալ այս ոլորտում առկա բազմաթիվ խնդիրների լուծման, սոցիալական և իրավական երաշխիքների պաշշաճ և նպատակային կիրառման համար, որի արդյունքում յուրաքանչյուր երեխա հնարավորություն կունենա ինքնուրույն որոշակի միջոցներ ձեռնարկել իր խախտված իրավունքները վերականգնելու համար:

Կան բազմաթիվ երկրներ, որոնք ունեն երեխաների իրավունքների պաշտպանության մասնագիտացված առանձին հաստատություններ, իսկ որոշներում էլ համապատասխան ստորաբաժանումներ են ստեղծվել, որոնց գործունեությունն ամբողջությամբ կենտրոնացված է մեկ ուղղությամբ: Այնպիսի զարգացող երկրում ինչպիսին Հայաստանն է, որը դեռևս որպես ժողովրդավարական երկիր զարգացման փուլում է՝ բազմաթիվ տնտեսական, սոցիալական և քաղաքական խնդիրներով, երեխաների իրավունքների պաշտպանությանը հաճախ բավարար ուշադրություն չի դարձվում, որի արդյունքում, լինելով անպաշտպան և խոցելի՝ վերջիններս զրկվում են կյանքի բավարար կենսամակարդակ ունենալուց, իրենց փիզիկական և մտավոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններում մեծանալուց և զոհ են դառնում հասարակության մի շարք բացասական դրսնորումների: Այս առումով Պաշտպանի գրասենյակում առանձին ստորաբաժանման ստեղծումն ամբողջովին արդարացված է: Այն կարևոր սոցիալական և իրավական երաշխիք կարող է հանդիսանալ այս ոլորտում առկա բազմաթիվ խնդիրների արդյունավետ լուծման, ինչպես նաև հասարակության յուրաքանչյուր անդամի մոտ երեխաների նկատմամբ իրավագիտակցության բարձրացման համար:

Նորվեգիան առաջին երկիրն էր, որտեղ առաջին անգամ ստեղծվեց երեխաների իրավունքների պաշտպանության անկախ մարմինը՝ երեխաների օմբուդսմենը: 1975թ. Արդարադատության

նախարարությունը հատուկ կոմիտե ստեղծեց Երեխաների վերաբերյալ օրենսդրությունն ուսումնասիրելու և առանձին հանրային մասնագիտացված մարմնի ստեղծման մասին կարծիք հայտնելու համար: 1981թ. Նորվեգիայի խորհրդարանը համապատասխան արձանագրություն ընդունեց Երեխաների իրավունքների պաշտպան ստեղծելու վերաբերյալ: Եվ իիշյալ կոմիտեի միաձայն եզրակացությունը, որը ներկայացվեց 1977թ. կազմված գեկույցում, այն էր, որ անհրաժեշտ էր ստեղծել Երեխաների Օմբուդսմեն, որը կպաշտպաներ Երեխաների իրավունքներն ու շահերը հանրային և մասնավոր մարմինների հետ հարաբերություններում: Երեխաների իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիայի արձանագրությունը 1998թ. հղում կատարեց Երեխաների իրավունքների պաշտպանի դերի վրա, համաձայն որի, Վերջինս իր գործունեությունը միջազգային և ազգային մակարդակներում պետք է իրականացնի կոնվենցիայի սկզբունքներին համաձայն:

Անկախ գրասենյակների ստեղծումը խրախոսավեց նաև Եվրոպայի Խորհուրդի կողմից: 1996թ. «Երեխաների Եվրոպական մարտավարության» մեջ նշվում է Երեխաների իրավունքների անկախ հանձնակատարի կամ այլ հաստատության կարևորությունը, որի հիմնական առաքելությունը Երեխաների կյանքը բարելավելն է և հանրության համար մատչելիության ապահովումը տեղական գրասենյակների միջոցով իրականացնելը:

Պաշտպանի գրասենյակում Երեխաների իրավունքների մասնագիտացված բաժին ունենալու նպատակը, ինչպես նշվեց, Վերջիններիս և նրանց իրավունքներն ավելի տեսանելի դարձնելը և Երեխաների համար բարձրագույն քաղաքական և սոցիալական գերակայությունների զարգացումն է:

Նման գրասենյակներ գործում են Եվրոպական այնպիսի երկրներում ինչպիսիք են Հունգարիան, Պորտուգալիան, Իսպանիան և Ուկրաինան: Այդպիսի դեպքերում վերջինս ամբողջությամբ ներառված է մարդու իրավունքների ընդհանուր պաշտպանության ուղղություններում, դրանց քննարկումը չի իրականացվում ավելի ցածր մակարդակով, այս ոլորտում առկա խնդիրների լուծման ընթացքում պաշտպանը հմարավորություն ունի օգտագործել գրասեն-

յակի ողջ ռեսուրսները և մարդու իրավունքների պաշտպանին վերապահված իրավասությունները ողջ ծավալով, սերտորեն համագործակցել այլ ոլորտներում գործող հանձնակատարների հետ: Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը իր զարգացման և արտաքին տեսքի մշակման ընթացքում պետք է ամբողջությամբ հաշվի առնի երեխաների կարգավիճակի առանձնահատկությունները, նման ստորաբաժանում ստեղծելու հիմք հանդիսացող և վերջինիս գործունեությունը կարգավորող օրենսդրությունը պետք է ուղղված լինի Երեխաների իրավունքների կոնվենցիայի դրույթների իրականացմանը, ինչպես նաև այս ստորաբաժանման վրա դրված խնդիրները, նրան վերապահված իրավասություններն ու գործունեության հիմնական ուղղությունները պետք է համապատասխանեն հիշյալ կոնվենցիայի դրույթներին: Այստեղ կարևոր է տարրեր իրավիճակներում հաշվի առնել երեխայի տեսակետներն ու զգացմունքները և ակտիվ քայլեր ձեռնարկել նրա հետ շփման մեջ մտնելու համար, իրավասություններ ունենալ հետևելու երեխայի կարգավիճակին կրթական հաստատություններում, հնարավորության դեպքում իրավասություններ ունենալ երեխաների իրավունքների պաշտպանությամբ հանդիս գալ ոչ միայն պետական, այլև մասնավոր մարմինների հետ հարաբերություններում: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Պաշտպանը քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու (այդ թվում՝ նաև քաղաքացու) իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները»: Այսպիսով, ակնհայտ է, որ Պաշտպանն իրավասու է անձանց իրավունքների պաշտպանությամբ հանդիս գալ միայն այն դեպքերում, եթե դրանք խախտվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Եվ մասնավոր անձանց հետ հարաբերություններում, եթե չափահաս անձինք կարող են որոշակի միջոցներ ձեռնարկել իրենց իրավունքների պաշտպանության համար, ա-

պա երեխաների համար իրավիճակն այլ է: Հաշվի առնելով վերջին-ներիս խոցելիությունը և այն հանգամանքը, որ նրանց իրավունքները հաճախ խախտվում են հենց լրատանիքի անդամների և շրջապատում գտնվող այլ անձանց կողմից՝ մասնավոր անձանց կողմից երեխաների իրավունքների խախտման դեպքում Պաշտպանի միջամտության հնարավորության օրենքով նախատեսումն ամբողջությամբ արդարացված է:

Հիշյալ մասնագիտացված ստորաբաժանման աշխատակիցները պետք է իրավունք ունենան մուտք գործել այլընտրանքային խնամքի և բոլոր այն հաստատությունները, որտեղ կարող են երեխաներ գտնվել, ինչպես նաև անկախ և անկաշկանդ զեկույցներ ներկայացնել նրանց իրավունքների իրավիճակի վերաբերյալ: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն «Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն, կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները»: Պաշտպանի այս իրավասությունը կարելի է ասել երաշխիք կարող է հանդիսանալ այլընտրանքային խնամքի և երեխաներ ունեցող այլ հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանության և իրականացման նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու համար, իսկ անարգել այցելությունների շնորհիվ նման հաստատությունների դեկավարները և աշխատակիցներն ավելի աշալուր կմուտենան իրենց վրա դրված պարտականությունների կատարմանը:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կարելի է առանձնացնել մարդու իրավունքների պաշտպանի գործունեության 4 հիմնական նպատակներ՝

1. բոլոր երեխաների համար հանդես գալ որպես պաշտպան և խոսնակ

2. խոցելի իրավիճկներում գտնվող երեխաներին առաջարկվող օգնության ոլորտի ընդլայնում
3. ապահովել, որպեսզի առանձնահատուկ ուշադրություն դարձվի խոցելի խմբերում ներառված երեխաներին
4. ապահովել բոլոր երեխաների շահերի պաշտպանությունը ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիային համապատասխան:

Երեխաների իրավունքների կոնվենցիայի դրույթների կիրառման նկատմամբ մոնիթորինգի իրականացման գործում օմբուդսմենին դերը պետք է նշանակալի լինի, քանի որ այն մի գործընթաց է, որն առկա է լինելու գործունեության ողջ ընթացքում: Խոցելի խմբին պատկանող երեխաների դեպքում նրա գործունեությունը պետք է ուղղված լինի նաև իրավունքների պաշտպանության միջոցների վերաբերյալ իրազեկման բարձրացմանը և նրանց իրավիճակի բարելավման համար նախատեսվող մեխանիզմների ստեղծմանը: Այստեղ կարևոր է նաև անհրաժեշտության դեպքում աջակցել երեխաներին օգնություն ստանալ պետական կառավարման մարմիններից և համագործակցություն ձևավորել նրանց միջև:

Ավելին՝ Պաշտպանը հնարավորություն պետք է ունենա օրենսդրական բարեփոխումների նախաձեռնությամբ հանդես գալ երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրության զարգացման և միջազգային լավագույն փորձի ներդնման համար: Որպես խոսնակ նա պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները երեխաների իրավունքները հանրությանը լսելի դարձնելու համար, որտեղ կարևոր է նաև երեխաների մասնակցությունը: Դրա համար անհրաժեշտ է նրանց հնարավորություն տալ ազատորես խոսելու, արտահայտելու իրենց կարծիքը, մինչդեռ վերջիններիս ձայնը գրեթե լսելի չէ հանրային մարմինների հետ հարաբերություններում:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի համաձայն Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, քնակության վայրից, սեռից, ուսասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից և գործունակությունից: Օրենքի այս դրույթը կարելի է ասել կարևոր ե-

րաշխիք է երեխաների համար Պաշտպանին դիմելու իրավունքի իրականացման հարցում, քանի որ որևէ տարիքային շեմ նախատեսված չէ, և ցանկացած դեպքում, եթե երեխան գտնում է, որ խախտվել են իր իրավունքները կարող է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի օգնության դիմել Պաշտպանին դրանց վերականգնման խնդրով:

Ստեղծելով երեխաների իրավունքների պաշտպանության մասնագիտացված ստորաբաժանում՝ պետք է հաշվի առնել, որ երեխաների իրավունքների պաշտպանության խնդրով դիմումատու են հանդիսանալու ոչ միայն նրանց ծնողները կամ ներկայացուցչները, այլև հենց երեխաները: Այդ պատճառով պետք է մշակվեն և ներդնվեն դյուրին մեխանիզմներ ցանկացած իրավիճակում Պաշտպանին դիմելու իրավունքի արագ իրականացման համար: Այս առումով պետք է նշել, որ դիմում-բողոքները և գրավոր, և բանավոր տեսքով ներկայացնելու հնարավորությունն արդեն իսկ հեշտացնում է հիշյալ գործընթացը և մատչելի դարձնում երեխաների համար: Գրավոր դիմումները կարող են ներկայացվել փոստային կամ էլեկտրոնային նամակով: Գրավոր դիմումների յուրաքանչյուր դեպքում դրանք պետք է մանրակրկիտ ուսումնասիրվեն և պատշաճ կերպով ուշադրության արժանանա իրավունքների խախտման մասին յուրաքանչյուր հանգամանք: Ընդ որում դրանք հատուկ մշակված ձևով ներկայացնելու պահանջի բացակայությունը զգալիորեն կիեշտացնի ողջ գործընթացը:

Ինչ վերաբերում է բանավոր դիմումներին, ապա այստեղ երեխաների նկատմամբ ցուցաբերվող մոտեցման յուրահատուկ ռազմավարություն է պետք մշակել: Հաճախ Պաշտպանին կարող են դիմել երեխաներ կամ նրանց ծնողները, որոնք գտնվում են հոգեբանական բարդ իրավիճակում: Նման դեպքերում կարևոր է նաև հոգեբանի մասնակցությունը, քանի որ նրանց մոտ պետք է վստահության մինուրատ ձևավորել դեպի Պաշտպանը, բաժնի այն մասնագետը, որն անձամբ պետք է զբաղվի դիմում-բողոքի քննարկմամբ: Հետևաբար նրանք պետք է վստահ լինեն, որ իրենց հասկանում են, հայտնված յուրաքանչյուր տեղեկություն հաշվի է առնվում և ձեռնակվելու են հնարավոր բոլոր միջոցները խախտված իրավունքների վերա-

կանգնման համար: Երեխաների մոտ վստահության մթնոլորտ ձևավորելու հարցում պետք է նշել նաև Պաշտպանի կարևոր դերի մասին: Անհրաժեշտ է պարբերաբար հանդիպումներ ունենալ նրանց հետ, հնարավորության դեպքում անձամբ լսել ներկայացվող բողոքները, քանի որ այս կերպ կապահովվի Պաշտպանի հետ անմիջականորեն շփվելու մատչելիությունը:

Խոսելով քանավոր դիմումների մասին, պետք է նշել նաև հեռախոսազանգի միջոցով ներկայացվող դիմումները: Անհրաժեշտ է ունենալ հեռախոսահամար, որը հեշտությամբ կարելի է մտապահել և անհրաժեշտության դեպքում կապ հաստատել համապատասխան մասնագետների հետ: Նման դեպքերի համար կարևոր է նաև իրավաբան-մասնագետների հատուկ պատրաստվածությունը երեխաների հետ աշխատելու համար: Վերջիններս պետք է հատուկ դասընթացներ անցնեն տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու, հեռախոսազրույցի և անմիջական հանդիպումների ընթացքում խորհրդներ տալու համար:

Երեխաների իրավունքների պաշտպանության գործում կարևոր է նաև երեխաների դերակատարությունը, որն, ի դեպ, կարևոր նախապայման է արդյունավետ գործելու համար: Մշտապես իրականացվող միջոցառումների միջոցով, լինեն դրանք դասախոսություններ կամ համապատասխան մասնագետների հետ անցկացվող քննարկումներ, անհրաժեշտ է նպաստել երեխաների մոտ իրավագիտակցության բարձրացմանը, իրենց իրավունքների և դրանց իրականացման և պաշտպանության հնարավորությունների ճանաշմանը, քանի որ այս կերպ կարելի է վերացնել այսօր երեխաների հոգեբանության մեջ առկա այն կարծրատիպը, որ մեծերի կողմից իրենց պատժելը, վիրավորելը, կարծիքը հաշվի չառնելը, նույնիսկ եթե դա կատարվում է նվաստացուցիչ կամ ցավոտ միջոցներով, թույլատրելի է, իսկ ծանր աշխատանքի դրդելը, մշտապես ճնշումներ գործադրելը՝ իրավաչափ:

Այսպիսով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը երեխաների իրավունքների պաշտպանության առանձին ստորաբաժանում ստեղծելով մեծապես կարող է նպաստել այս ոլորտում առկա միշտ խնդիրների լուծմանը, նրանց իրավունքների իրականացման

համար բարենպաստ պայմանների ստեղծմանը՝ հանդես գալով իրեն վերապահված լիազորություններով՝ որպես դիտորդ, միջնորդ և առանձին անհատների իրավունքների խախտումների գործերով պաշտպան: Պաշտպանի գործունեության ռազմավարության հիմնական ուղղությունները պետք է լինեն նպաստել երեխաների իրավունքների պաշտպանությանը հանրային և մասնավոր ոլորտներում, բարելավել նրանց զարգացման պայմանները: Սա նշանակում է, որ անհրաժեշտության դեպքում նա պետք է երեխաների քաղաքական ներկայացուցիչ հանդիսանա, իսկ այն դեպքերում երբ կոնկրետ գործով անհրաժեշտ է որևէ խնդրի վրա իրավիրել պետական մարմինների և լրատվամիջոցների ուշադրությունը, պետք է երեխաների անոնցից հանդես գա որպես ակտիվիստ:

Հանդես գալով որպես դիտորդ՝ Պաշտպանի գործունեությունը պետք է ուղղված լինի մոնիթորինգ իրականացնելուն այն ոլորտներում, որոնք որևէ կերպ առնչվում են երեխաների իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես, դրանք անհրաժեշտ են իրականացնել պարբերաբար կատարվող այցելությունների միջոցով այնպիսի հիմնարկություններ, որոնք անմիջականորեն աշխատում են երեխաների հետ: Այն նպատակ պետք է հետապնդի վեր հանել առկա խնդիրները և դրանք լսելի դարձնել հանրությանը, ուսումնասիրել դրանց առաջացման պատճառները և իրավիճակի բարելավման նպատակով ներկայացնել համապատասխան առաջարկներ: Անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել նման հաստատություններում խտրականության դրսորման բացառմանը, քանի որ երեխաների մոտ սխալ դաստիարակության և տեղեկատվության պակասի պատճառով կարող են խտրականության դրսորումներ լինել սոցիալապես ավելի վատ վիճակում գտնվող, խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ:

Որպես միջնորդ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանը պետք է ներկայացնի երեխաների շահերը պետական իրավասու մարմիններին և այն սուրյեկտուներին, որոնք անմիջականորեն առնչվում են դրանց, նրանց համար լսելի դարձնի առկա խնդիրները և նպաստի վերջիններիս կողմից այս ոլորտի նկատմամբ բարձր իրավագիտակցությամբ պայմանավորված արդ-

յունավետ գործունեություն իրականացնելուն: Այս առումով կարեղ են Պաշտպանի և աշխատակազմի համապատասխան մասնագետների և պետական իրավասու մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև մասնագիտացված հասարակական կազմակերպությունների միջն կառուցղական համագործակցության ձևավորումը, հաճախակի կազմակերպվող հանդիպումները և քննարկումները, փորձի փոխանակումը և նմանատիպ այլ միջոցառումները:

Անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ գործերի քննության ժամանակ առանձին ստորաբաժանման միջոցով յուրաքանչյուր դեպքում առանձնահատուկ մոտեցում կցուցաբերվի բաժնի մասնագիտացված աշխատակիցների շնորհիվ և հնարավորինս արդյունավետ լուծումներ կտրվեն առաջացած խնդիրներին:

Յանկացած դեպքում նման գործունեություն իրականացնելու համար Պաշտպանի աշխատակազմը կարիք կունենա լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտ մասնագետներ ունենալու և նրանց համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար: Ընդ որում կաևոր են ինչպես պետական բյուջետային հատկացումները, այնպես էլ դոնոր կազմակերպությունների կողմից ցուցաբերվող աջակցությունները:

Երեխանների իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնելու ընթացքում առկա խնդիրների, հայտնաբերված խախտումների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը բարձրացնելու համար կարևոր է արտահերթ իրապարակային գեկույցների պարբերաբար ներկայացումը համապատասխան իրավիճակային վերլուծություններով և բարեկազման առաջարկներով: Նման գեկույցները կարող են մեծապես նպաստել նաև երեխանների և հասարակության մյուս անդամների մոտ իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը:

Այսպիսով, ամփոփելով պետք է նշել, որ երեխանների իրավունքների պաշտպանության առանձին ստորաբաժանման ստեղծումը կարող է երաշխիք հանդիսանալ մարդու իրավունքների պաշտանի կողմից այս ոլորտում արդյունավետ գործունեություն իրականացնելու համար, որը հիմնված կլինի անկախության, ինքնավարության, անկողմնակալության, բափանցիկության, արդարության,

հավասարության, պրոֆեսիոնալիզմի և բազմակարծության սկզբունքների վրա: Այն կիրագործվի հանրային մարմինների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության միջոցով՝ ինֆորմացիայի և լավագույն փորձի փոխանակման, համապատասխան ոլորտի միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից աջակցություն ստանալու ճանապարհով: Պաշտպանն իր իրավասությունների իրականացմանը կներգրավի նաև երեխաներին և նրանց ներկայացուցիչներին, որը հնարավորություն կտա անմիջականորեն ծանոթանալ վերջիններիս խնդիրներին, արագ արձագանքել առաջացած դժվարություններին, արդյունավետ լուծումներ կամ որակյալ խորհրդատվություն տալ դժվարին իրավիճակներում:



## ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան Սայաթ -Նովա 24 , (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մայան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)